

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2001թ. նոյեմբերի 2-ին հաստատված «Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**

## ԿՈՆՎԵՆՑԻԱ

### ՍՏՈՐՋՐՅԱ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովը 2001 թվականի հոկտեմբերի 15 ից նոյեմբերի 3-ը Փարիզում հրավիրված իր 31-րդ նստաշրջանում,

**ընդունելով** ստորջրյա մշակութային ժառանգության կարելիությունը որպես մարդկության մշակութային ժառանգության անբաժանելի մաս, ինչպես նաեւ ժողովուրդների ու ազգերի պատմության մեջ և նրանց միջեւ հարաբերություններում ընդհանուր ժառանգությանը վերաբերող առանձնահատուկ կարևորություն ունեցող տարր,

**գիտակցելով** ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության եւ պահպանության կարելիությունը եւ այն, որ դրա պատասխանատվությունը կրում են բոլոր պետությունները,

**նշելով** ստորջրյա մշակութային ժառանգության նկատմամբ աճող հանրային հետաքրքրությունը եւ հանրային գնահատանքը,

**համոզված լինելով** ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության եւ պահպանության գործում հետազոտության, տեղեկատվության եւ կրթության կարելիության մեջ,

**համոզված լինելով**, որ հանրային իրավունքն ապահովում է տեղում ստորջրյա մշակութային ժառանգության հասանելիությունից խելամիտ եւ անվնաս կերպով օգտվելը, եւ որ հանրային կրթության կարելիությունն այդ ժառանգության վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացմանը, դրա գնահատմանը եւ պաշտպանությանը նպաստելն է,

**գիտակցելով** այն փաստը, որ ստորջրյա մշակութային ժառանգությունը վտանգված է դրա դեմ ուղղված չարտոնված գործողությունների պատճառով, եւ որ նման գործողությունները կանխելու համար անհրաժեշտ է ձեռնարկել ավելի խիստ միջոցառումներ,

**գիտակցելով** այն հնարավոր բացասական ազդեցությանը պատշաճ կերպով արձագանքելու անհրաժեշտությունը, որը կարող են ունենալ իրավաչափ գործողությունները՝ պատահականորեն ազդելով ստորջրյա մշակութային ժառանգության վրա,

**խորապես մտահոգված լինելով** ստորջրյա մշակութային ժառանգության աճող առեւտրային շահագործմամբ եւ մասնավորապես՝ կոնկրետ գործողություններով, որոնք ուղղված են ստորջրյա մշակութային ժառանգության վաճառքին, ձեռքբերմանը կամ փոխանակմանը,

**գիտակցելով** առաջատար տեխնոլոգիաների հասանելիությունը, որը նպաստում է ստորջրյա մշակութային ժառանգության հայտնաբերմանը եւ դրա հասանելիության ընդլայնմանը,

**հավատալով**, որ պետությունների, միջազգային կազմակերպությունների, գիտական հաստատությունների, մասնագիտական կազմակերպությունների, հնագետների, ջրասուզորդների, այլ շահագրգիռ կողմերի եւ հանրության լայն շրջանակների միջեւ համագործակցությունը կարեւոր է ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության համար,

**հաշվի առնելով**, որ ստորջրյա մշակութային ժառանգության հետազոտությունը, պեղումները եւ պաշտպանությունը պահանջում են հատուկ գիտական մեթոդների առկայություն եւ կիրառում, համապատասխան տեխնիկայի եւ սարքավորումների օգտագործում, ինչպես նաեւ մասնագիտացման բարձր մակարդակ, որոնք բոլորը վկայում են միասնական կառավարման չափանիշների անհրաժեշտության մասին,

**գիտակցելով** ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանությանը եւ պահպանությանը վերաբերող կանոնների կողիֆիկացման եւ շարունակական մշակման անհրաժեշտությունը՝ միջազգային իրավունքին եւ գործելակերպին, այդ թվում՝ «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը եւ դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու եւ կանխելու միջոցների մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թվականի նոյեմբերի 14-ի կոնվենցիային, «Մշակութային եւ բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թվականի նոյեմբերի 16-ի կոնվենցիային եւ «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության 1982 թվականի դեկտեմբերի 10-ի կոնվենցիային համապատասխան,

**ստանձնելով հանձնառություն** բարելավելու միջազգային, տարածաշրջանային եւ ազգային մակարդակներում միջոցառումների արդյունավետությունը՝ ստորջրյա մշակութային ժառանգությունը տեղում պահպանելու կամ գիտական կամ պաշտպանական նպատակներով անհրաժեշտ լինելու դեպքում՝ խնամքով դուրս բերելու համար,

**որոշելով** իր քսանիններորդ նստաշրջանում, որ այս հարցը պետք է դառնա միջազգային կոնվենցիայի առարկա,

**ընդունեց** սույն Կոնվենցիան 2001 թվականի նոյեմբերի երկրորդ օրը:

### **Հոդված 1 Սահմանումները**

Սույն Կոնվենցիայի նպատակներով՝

1    ա)    «Ստորջրյա մշակութային ժառանգություն» նշանակում է մարդկության գոյության բոլոր այն հետքերը, որոնք ունեն մշակութային, պատմական կամ հնագիտական բնույթ, եւ որոնք առնվազն 100 տարվա ընթացքում պարբերաբար կամ անընդհատ մասամբ կամ ամբողջությամբ գտնվել են ջրի տակ, ինչպիսիք են՝

i) վայրեր, շինություններ, շենքեր, գտածո առարկաներ եւ մարդկային մասունքներ դրանց հնագիտական եւ բնական միջավայրի հետ միասին,

ii) նավեր, օդանավեր, այլ տրանսպորտային միջոցներ կամ դրանց որեւէ մաս, դրանց բեռը կամ այլ պարունակություն դրանց հնագիտական եւ բնական միջավայրի հետ միասին, եւ

iii) նախապատմական բնույթի առարկաներ:

բ) Ծովի հատակին տեղադրված խողովակաշարերն ու մալուխները չեն համարվում ստորջրյա մշակութային ժառանգություն:

գ) Ծովի հատակին տեղադրված եւ դեռեւս օգտագործվող խողովակաշարերից եւ մալուխներից բացի այլ կայանքներ չեն համարվում ստորջրյա մշակութային ժառանգություն:

2 ա) «Կողմ պետություններ» նշանակում է այն պետությունները, որոնք համաձայնել են, որ սույն Կոնվենցիան պարտադիր է իրենց համար, եւ որոնց համար սույն Կոնվենցիան գործում է:

բ) Սույն Կոնվենցիան համապատասխան փոփոխություններով կիրառվում է 26-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետում նշված այն տարածքների նկատմամբ, որոնք դառնում են սույն Կոնվենցիայի կողմեր՝ համաձայն այդ կետում նշված պայմանների, եւ այդպիսով «Կողմ պետություններ» եզրույթը վերաբերում է այդ տարածքներին:

3. «ՅՈՒՆԵՍԿՕ» նշանակում է Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպություն:

4. «Գլխավոր տնօրեն» նշանակում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն:

5. «Շրջան» նշանակում է ծովերի ու օվկիանոսների հատակը եւ դրանց ընդերքը, որոնք գտնվում են ազգային իրավագործության սահմաններից դուրս:

6. «Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողություններ» նշանակում է այն գործողությունները, որոնց հիմնական օբյեկտը ստորջրյա մշակութային ժառանգությունն է, եւ որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ֆիզիկապես խախտել կամ այլ կերպ վնասել ստորջրյա մշակութային ժառանգության ամբողջականությանը:

7. «Ստորջրյա մշակութային ժառանգության վրա պատահաբար ազդող գործողություններ» նշանակում է այն գործողությունները, որոնց դեպքում թեւ ստորջրյա մշակութային ժառանգությունը որպես հիմնական օբյեկտ կամ օբյեկտներից մեկը չի դիտվում, սակայն դրանք կարող են ֆիզիկապես խախտել կամ այլ կերպ վնասել ստորջրյա մշակութային ժառանգության ամբողջականությանը:

8. «Պետական նավեր եւ օդանավեր» նշանակում է ռազմանավեր եւ այլ նավեր կամ օդանավեր, որոնք պատկանել են պետությանը կամ շահագործվել են դրա կողմից, եւ որոնք խորտակման ժամանակ օգտագործվել են միայն պետական ոչ առեւտրային նպատակներով, ինչպես նաեւ նույնականացվել են այդպիսին եւ համապատասխանում են ստորջրյա մշակութային ժառանգության սահմանմանը:

9. «Կանոններ» նշանակում է սույն Կոնվենցիայի 33-րդ հոդվածում նշված ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործունեությանը վերաբերող կանոնները:

## **Հոդված 2. Նպատակներն ու ընդհանուր սկզբունքները**

1. Սույն Կոնվենցիայի նպատակն է ապահովել եւ ամրապնդել ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանությունը:

2. Կողմ պետությունները համագործակցում են ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության ոլորտում:

3. Կողմ պետությունները պահպանում են ստորջրյա մշակութային ժառանգությունն ի շահ մարդկության՝ սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն:

4. Սույն Կոնվենցիային եւ միջազգային իրավունքին համապատասխան՝ Կողմ պետություններն առանձին կամ միասին, ըստ անհրաժեշտության, ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, որոնք անհրաժեշտ են ստորջրյա մշակութային ժառանգությունը պաշտպանելու համար՝ այդ նպատակով իրենց տրամադրության տակ գտնվող լավագույն իրագործելի միջոցների օգտագործմամբ եւ իրենց կարողություններին համապատասխան:

5. Ստորջրյա մշակութային ժառանգության տեղում պահպանությունը համարվում է նախընտրելի տարբերակ մինչեւ այդ ժառանգությանն ուղղված ցանկացած գործողություն թույլ տալը կամ իրականացնելը:

6. Դուրս բերված ստորջրյա մշակութային ժառանգությունն ի պահ է հանձնվում, պահվում եւ կառավարվում այնպես, որ ապահովվի դրա երկարաժամկետ պահպանումը:

7. Ստորջրյա մշակութային ժառանգությունն առեւտրային նպատակով չի շահագործվում:

8. Համաձայն պետական գործելակերպի եւ միջազգային իրավունքի, այդ թվում՝ «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի՝ սույն Կոնվենցիայով սահմանված որեւէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես միջազգային իրավունքի եւ պետական գործելակերպի կանոնների՝ ինքնիշխան անձեռնմխելիությանը վերաբերող փոփոխություն, ինչպես նաեւ որեւէ պետության իրավունքների փոփոխություն իր պետական նավերի եւ օդանավերի նկատմամբ:

9. Կողմ պետություններն ապահովում են, որ ծովային ջրերում գտնվող բոլոր մասունքների նկատմամբ ցուցաբերվի պատշաճ հարգանք:

10. Տեղում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգությունն ուսումնասիրելու կամ փաստաթղթավորելու նպատակով խրախուսվում է այդ ժառանգության վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը բարձրացնելը, այն գնահատելը եւ պաշտպանելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման հասանելիությունն անհամատեղելի է դրա պաշտպանության եւ կառավարման հետ:

11. Սույն Կոնվենցիայի հիման վրա ձեռնարկված որեւէ արարք կամ գործողություն հիմք չէ ազգային ինքնիշխանության կամ իրավագործության առնչությամբ որեւէ պահանջ ներկայացնելու, պաշտպանելու կամ վիճարկելու համար:

### **Հոդված 3. Սույն Կոնվենցիայի եւ «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի միջեւ կապը**

Սույն Կոնվենցիայի որեւէ դրույթ չի հակասում պետությունների իրավունքներին, իրավագործությանը եւ պարտականություններին՝ համաձայն միջազգային իրավունքի, այդ թվում՝ «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի: Սույն Կոնվենցիան մեկնաբանվում եւ կիրառվում է միջազգային իրավունքի, այդ թվում՝ «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի համատեքստում եւ դրան համապատասխան եղանակով:

### **Հոդված 4. Ծովում փրկարարության կանոնների եւ գանձերի հայտնաբերման վերաբերյալ կանոնների միջեւ կապը**

Ստորջրյա մշակութային ժառանգության հետ կապված ցանկացած գործողություն, որի նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան, ենթակա չէ փրկարարության կամ գանձերի հայտնաբերման վերաբերյալ կանոններին, եթե դա՝

- ա) թույլատրված չէ իրավասու մարմինների կողմից, եւ
- բ) ամբողջությամբ չի համապատասխանում սույն Կոնվենցիային, եւ
- գ) չի ապահովում, որ դուրս բերված ցանկացած ստորջրյա մշակութային ժառանգություն առավելագույնս պաշտպանված լինի:

#### **Հոդված 5. Ստորջրյա մշակութային ժառանգության վրա պատահականորեն ազդող գործողությունները**

Յուրաքանչյուր Կողմ պետություն օգտագործում է իր տրամադրության տակ գտնվող լավագույն իրագործելի միջոցները՝ կանխելու կամ մեղմելու ցանկացած վնասակար ազդեցություն, որը կարող է առաջանալ իր իրավագործության ներքո իրականացվող գործողություններից՝ պատահականորեն ազդելով ստորջրյա մշակութային ժառանգության վրա:

#### **Հոդված 6 Երկկողմ, տարածաշրջանային կամ բազմակողմ այլ համաձայնագրեր**

1. Կողմ պետություններին խրախուսվում է կնքել երկկողմ, տարածաշրջանային կամ այլ բազմակողմ համաձայնագրեր կամ մշակել գործող համաձայնագրերը՝ ստորջրյա մշակութային ժառանգությունը պահպանելու համար: Այդ բոլոր համաձայնագրերն ամբողջովին համապատասխանում են սույն Կոնվենցիայի դրույթներին եւ չեն խաթարում դրա համընդհանուր բնույթը: Պետությունները կարող են նման համաձայնագրերով ընդունել կանոններ եւ կանոնակարգեր, որոնք կապահովեն ստորջրյա մշակութային ժառանգության առավել լավ պաշտպանություն, քան սույն Կոնվենցիայով ընդունված կանոններն ու կանոնակարգերն են ապահովում:

2. Այդպիսի երկկողմ, տարածաշրջանային կամ այլ բազմակողմ համաձայնագրերի կողմերը կարող են առաջարկել տվյալ ստորջրյա

մշակութային ժառանգության հետ ստուգելի կապ, հատկապես՝ մշակութային, պատմական կամ հնագիտական բնույթի կապ ունեցող պետություններին միանալ այդ համաձայնագրերին:

3. Սույն Կոնվենցիան չի փոփոխում Կողմ պետությունների իրավունքներն ու պարտավորությունները, որոնք վերաբերում են խորտակված նավերի պաշտպանությանն ու բխում են սույն Կոնվենցիայի ընդունումից առաջ կնքված այլ երկկողմ, տարածաշրջանային կամ բազմակողմ համաձայնագրերից եւ մասնավորապես այն համաձայնագրերից, որոնք համապատասխանում են սույն Կոնվենցիայի նպատակներին:

#### **Հոդված 7. Ստորջրյա մշակութային ժառանգությունը ներքին ջրերում, արշիպելագային ջրերում եւ տարածքային ծովում**

1. Կողմ պետություններն իրենց ինքնիշխանությունն իրականացնելիս ունեն բացառիկ իրավունք՝ կարգավորելու եւ թույլատրելու իրականացնել ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողություններ իրենց ներքին ջրերում, արշիպելագային ջրերում եւ տարածքային ծովում:

2. Չհակասելով ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության վերաբերյալ մյուս միջազգային համաձայնագրերին եւ միջազգային իրավունքի կանոններին՝ Կողմ պետությունները պահանջում են, որ այդ կանոնները կիրառվեն իրենց ներքին ջրերում, արշիպելագային ջրերում եւ տարածքային ծովում իրականացվող՝ ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունների նկատմամբ:

3. Կողմ պետությունները, իրենց արշիպելագային ջրերում եւ տարածքային ծովում իրենց ինքնիշխանությունն իրականացնելիս եւ հաշվի առնելով պետությունների միջեւ ընդհանուր գործելակերպը, պետական նավերի եւ օդանավերի պաշտպանության լավագույն մեթոդների շուրջ համագործակցելու նպատակով պետք է տեղեկացնեն սույն Կոնվենցիայի Կողմ

հանդիսացող դրոշի պետությանը եւ անհրաժեշտության դեպքում՝ այլ պետությունների, որոնց հետ առկա է ստուգելի կապ, մասնավորապես՝ մշակութային, պատմական կամ հնագիտական բնույթի, այդպիսի նույնականացվող պետական նավերի եւ օդանավերի հայտնաբերման մասին:

#### **Հոդված 8. Ստորջրյա մշակութային ժառանգությունը հարակից գոտում**

Կողմ պետությունները, չխախտելով եւ լրացնելով «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 9-րդ եւ 10-րդ հոդվածները եւ 303-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, կարող են կարգավորել եւ թույլատրել գործողություններ, որոնք ուղղված են ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության ապահովմանն իրենց հարակից գոտում: Այդ պարտականությունը կատարելիս նրանք պահանջում են, որ այդ կանոնները կիրառվեն:

#### **Հոդված 9. Զեկույցների եւ ծանուցումների տրամադրումը բացառիկ տնտեսական գոտում եւ մայրցամաքային շelfում**

1 Յուրաքանչյուր Կողմ պետություն պատասխանատվություն է կրում բացառիկ տնտեսական գոտում եւ մայրցամաքային շelfում ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության համար՝ համաձայն սույն Կոնվենցիայի:

Համապատասխանաբար՝

ա) Կողմ պետությունը պահանջում է, որ այն դեպքում, երբ իր քաղաքացին կամ իր դրոշը կրող նավը հայտնաբերում է իր բացառիկ տնտեսական գոտում կամ մայրցամաքային շelfում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգություն կամ մտադիր է իրականացնել դրան ուղղված գործողություն, այդ քաղաքացին կամ նավապետը զեկույցի իրեն այդ հայտնաբերման կամ գործողության մասին

բ) մեկ այլ Կողմ պետության բացառիկ տնտեսական գոտում կամ մայրցամաքային շելֆում՝ i) Կողմ պետությունները պահանջում են, որ քաղաքացին կամ նավապետն այդպիսի հայտնաբերման կամ գործողության մասին զեկուցի իրենց եւ այդ մյուս Կողմ պետությանը.

ii) այլընտրանքային տարբերակով Կողմ պետությունը պահանջում է, որ քաղաքացին կամ նավապետն այդպիսի հայտնաբերման կամ գործողության մասին զեկուցի իրեն, եւ ապահովում է, որ այդ զեկույցներն արագ եւ արդյունավետ կերպով փոխանցվեն բոլոր մյուս Կողմ պետություններին:

2. Վավերացնելու, ընդունելու, հաստատելու կամ միանալու մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելիս Կողմ պետությունը հայտնում է սույն հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն զեկույցի փոխանցման եղանակը:

3. Կողմ պետությունը ծանուցում է Գլխավոր տնօրենին հայտնաբերման կամ գործողությունների մասին, որոնց մասին զեկուցվել է՝ համաձայն սույն հոդվածի 1-ին կետի:

4. Գլխավոր տնօրենն անմիջապես բոլոր Կողմ պետություններին հասանելի է դարձնում իրեն ծանուցված ցանկացած տեղեկության մասին՝ համաձայն սույն հոդվածի 3-րդ կետի:

5. Ցանկացած Կողմ պետություն կարող է հայտնել այն Կողմ պետությանը, որի բացառիկ տնտեսական գոտում կամ մայրցամաքային շելֆում գտնվում է ստորջրյա մշակութային ժառանգությունը, այդ ստորջրյա մշակութային ժառանգության արդյունավետ պաշտպանությունն ապահովելու ուղիների վերաբերյալ խորհրդակցություններին մասնակցելու իր շահագրգռվածության մասին: Նման հայտարարությունը հիմնված է լինում տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության հետ ստուգելի, հատկապես՝ մշակութային, պատմական կամ հնագիտական կապի վրա:

## **Հոդված 10. Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանությունը բացառիկ տնտեսական գոտում և մայրցամաքային շելֆում**

1 Որեւէ թույլտվություն չի տրամադրվում բացառիկ տնտեսական գոտում կամ մայրցամաքային շելֆում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունների իրականացման համար՝ բացառությամբ սույն հոդվածի դրույթներին համապատասխան դեպքերի:

2 Այն Կողմ պետությունը, որի բացառիկ տնտեսական գոտում կամ մայրցամաքային շելֆում գտնվում է ստորջրյա մշակութային ժառանգությունը, իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու այդպիսի ժառանգությանն ուղղված ցանկացած գործողության իրականացումը՝ միջազգային իրավունքով, այդ թվում՝ «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայով նախատեսված իր ինքնիշխան իրավունքներին կամ իրավագործությանը միջամտելը խոչընդոտելու համար:

3 Այն դեպքում, երբ առկա է ստորջրյա մշակութային ժառանգության հայտնաբերման դեպք կամ ենթադրվում է, որ այդ գործողությունն ուղղված է Կողմ պետության բացառիկ տնտեսական գոտում կամ մայրցամաքային շելֆում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգությանը, այդ Կողմ պետությունը՝

ա) խորհրդակցում է մյուս բոլոր Կողմ պետությունների հետ, որոնք հետաքրքրություն են հայտնել 9-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանությունն ապահովելու լավագույն եղանակների վերաբերյալ, բ) համակարգում է այդ խորհրդակցությունները որպես Համակարգող պետություն, եթե վերջինս հստակորեն չի հայտարարում, որ չի ցանկանում դա անել, որի դեպքում հետաքրքրություն հայտնած Կողմ պետությունները նշանակում են Համակարգող պետություն՝ համաձայն 9-րդ հոդվածի 5-րդ կետի:

4 Չսահմանափակելով բոլոր Կողմ պետությունների՝ ստորջրյա մշակութային ժառանգությունը պաշտպանելու պարտավորությունը՝ միջազգային

իրավունքին համապատասխան բոլոր իրագործելի միջոցները ձեռնարկելու միջոցով ստորջրյա մշակութային ժառանգությանը սպառնացող ցանկացած անմիջական վտանգ, այդ թվում՝ կողոպուտ կանխելու համար Համակարգող պետությունը կարող է ձեռնարկել բոլոր իրագործելի միջոցները եւ (կամ) տրամադրել ցանկացած անհրաժեշտ թույլտվություն՝ համաձայն սույն Կոնվենցիայի, եւ անհրաժեշտության դեպքում մինչեւ խորհրդակցությունների անցկացումը կանխել ստորջրյա մշակութային ժառանգությանը սպառնացող ցանկացած անմիջական վտանգ՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք առաջանում են մարդկային գործունեության հետեւանքով, թե որեւէ այլ պատճառով, այդ թվում՝ կողոպուտի: Նման միջոցներ ձեռնարկելիս հնարավոր է դիմել այլ Կողմ պետությունների աջակցությանը:

#### 5 Համակարգող պետությունը՝

ա) իրականացնում է Խորհրդակցություն տրամադրող պետությունների, այդ թվում՝ Համակարգող պետության կողմից համաձայնեցված պաշտպանության միջոցառումներ, եթե Խորհրդակցություն տրամադրող պետությունները, այդ թվում՝ Համակարգող պետությունը, չեն համաձայնել, որ այդ միջոցառումներն իրականացնի մեկ այլ Կողմ պետություն,

բ) տրամադրում է բոլոր անհրաժեշտ թույլտվությունները նման համաձայնեցված միջոցառումների համար՝ համաձայն Կանոնների, եթե Խորհրդակցություն տրամադրող պետությունները, որոնց թվում է նաեւ Համակարգող պետությունը, չեն համաձայնում, որ այդ թույլտվությունները տրամադրի մեկ այլ Կողմ պետություն,

գ) կարող է անցկացնել ստորջրյա մշակութային ժառանգության վերաբերյալ ցանկացած անհրաժեշտ նախնական հետազոտություն եւ դրա համար տրամադրում է բոլոր անհրաժեշտ թույլտվությունները, ինչպես նաեւ անհապաղ տեղեկացնում է Գլխավոր տնօրենին արդյունքների մասին, որն էլ իր հերթին նման տեղեկություններն անհապաղ տրամադրում է մյուս Կողմ պետություններին:

6 Համաձայն սույն հոդվածի՝ խորհրդակցություններ համակարգելիս, միջոցառումներ ձեռնարկելիս, նախնական հետազոտություններ անցկացնելիս եւ (կամ) թույլտվություններ տրամադրելիս Համակարգող պետությունն ընդհանուր առմամբ գործում է Կողմ պետությունների անունից եւ ոչ թե իր սեփական շահերից ելնելով: Նման ցանկացած գործողություն ինքնին հիմք չէ միջազգային իրավունքով, այդ թվում՝ «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայով չնախատեսված նախապատվության կամ իրավագործությունից բխող որեւէ իրավունքի հաստատման համար:

7 Համաձայն սույն հոդվածի 2-րդ եւ 4-րդ կետերի դրույթների՝ պետական նավերի եւ օդանավերի դեմ ուղղված որեւէ գործողություն չի կարող իրականացվել առանց դրոշի պետության համաձայնության եւ Համակարգող պետության հետ համագործակցության:

### **Հոդված 11. Շրջանում տրամադրվող զեկույցները եւ ծանուցումները**

1 Կողմ պետությունները պատասխանատվություն են կրում Շրջանում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգությունը պաշտպանելու համար՝ սույն Կոնվենցիային եւ «Ծովային իրավունքի մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի 149-րդ հոդվածին համապատասխան: Համապատասխանաբար այն դեպքում, երբ Կողմ պետության որեւէ քաղաքացի կամ դրա դրոշը կրող որեւէ նավ հայտնաբերում է Շրջանում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգություն կամ մտադիր է իրականացնել դրան ուղղված գործողություններ, այդ Կողմ պետությունը պահանջում է, որ իր քաղաքացին կամ նավապետն իրեն հաղորդի նման հայտնաբերման կամ գործողության մասին:

2 Կողմ պետությունները ծանուցում են Միջազգային ծովի հատակի մարմնի գլխավոր տնօրենին եւ գլխավոր քարտուղարին նման հայտնաբերման կամ գործողության մասին, որ իրենց հաղորդվել է:

3 Գլխավոր տնօրենն անհապաղ բոլոր Կողմ պետություններին հասանելի է դարձնում Կողմ պետությունների կողմից տրամադրված ցանկացած նման տեղեկություն:

4 Ցանկացած Կողմ պետություն կարող է Գլխավոր տնօրենին հայտնել այդ ստորջրյա մշակութային ժառանգության արդյունավետ պաշտպանությունն ապահովելու ուղիների վերաբերյալ խորհրդակցություններին մասնակցելու իր հետաքրքրվածության մասին: Նման հայտարարությունը հիմնված է լինում տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության հետ ստուգելի կապի վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով մշակութային, պատմական կամ հնագիտական բնույթի կապ ունեցող պետությունների նախապատվության իրավունքներին:

## **Հոդված 12. Շրջանում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանությունը**

1 Շրջանում գտնվող ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված ցանկացած գործողություն իրականացնելու համար որեւէ թույլտվություն չի տրամադրվում՝ բացառությամբ սույն հոդվածի դրույթներին համապատասխան դեպքերի:

2 Գլխավոր տնօրենն առաջարկում է բոլոր այն Կողմ պետություններին, որոնք 11-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն հետաքրքրվածություն են հայտնել, մասնակցել ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության լավագույն միջոցների վերաբերյալ խորհրդակցությանը եւ նշանակել Կողմ պետությանը որպես Համակարգող պետություն՝ նման խորհրդակցությունները համակարգելու համար: Գլխավոր տնօրենն առաջարկում է նաև Միջազգային ծովի հատակի մարմնին մասնակցել նման խորհրդակցություններին:

3 Բոլոր Կողմ պետությունները կարող են ձեռնարկել բոլոր իրագործելի միջոցները սույն Կոնվենցիային համապատասխան, անհրաժեշտության

դեպքում՝ խորհրդակցություններից առաջ՝ ստորջրյա մշակութային ժառանգությանը սպառնացող ցանկացած անմիջական վտանգ կանխելու համար՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք առաջանում են մարդկային գործունեության հետեւանքով, թե որեւէ այլ պատճառով, այդ թվում՝ կողոպուտի:

#### 4. Համակարգող պետությունը՝

ա) իրականացնում է խորհրդակցություն տրամադրող պետությունների, այդ թվում՝ Համակարգող պետության կողմից համաձայնեցված պաշտպանության միջոցներ, եթե խորհրդակցություն տրամադրող պետությունները, այդ թվում՝ Համակարգող պետությունը չեն համաձայնել, որ այդ միջոցներն իրականացնի մեկ այլ Կողմ պետություն, և

բ) տրամադրում է բոլոր անհրաժեշտ թույլտվությունները նման համաձայնեցված միջոցների համար՝ համաձայն սույն Կոնվենցիայի, եթե խորհրդակցություն տրամադրող պետությունները, այդ թվում՝ Համակարգող պետությունը, չեն համաձայնում, որ այդ թույլտվությունները տրամադրի մեկ այլ Կողմ պետություն:

5. Համակարգող պետությունը կարող է կատարել ստորջրյա մշակութային ժառանգության վերաբերյալ ցանկացած անհրաժեշտ նախնական հետազոտություն եւ տրամադրում է դրա համար բոլոր անհրաժեշտ թույլտվությունները, ինչպես նաեւ անհապաղ տեղեկացնում է Գլխավոր տնօրենին արդյունքների մասին, որն իր հերթին այդ տեղեկությունները հասանելի է դարձնում մյուս Կողմ պետություններին:

6. Համաձայն սույն հոդվածի՝ խորհրդակցությունները համակարգելիս, միջոցառումներ ձեռնարկելիս, նախնական հետազոտություններ կատարելիս եւ (կամ) թույլտվություններ տրամադրելիս Համակարգող պետությունը գործում է Կողմ պետությունների ընդհանուր անունից եւ մարդկության շահերից ելնելով: Հատուկ ուշադրություն է դարձվում մշակութային, պատմական կամ հնագիտական ծագում ունեցող պետությունների նախապատվության իրավունքներին տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության առնչությամբ:

7 Որեւէ Կողմ պետություն չի կարող ձեռնարկել կամ թույլատրել Շրջանում պետական նավերի եւ օդանավերի դեմ ուղղված գործողություններ՝ առանց դրոշի պետության համաձայնության:

### **Հոդված 13. Ինքնիշխան անձեռնմխելիությունը**

Ինքնիշխան անձեռնմխելիությամբ օժտված ռազմանավերը եւ այլ պետական նավեր կամ ռազմական օդանավեր, որոնք շահագործվում են ոչ առևտրային նպատակներով, գործում են իրենց սովորական շահագործման ռեժիմով եւ չեն իրականացնում ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողություններ, պարտավոր չեն հաղորդել ստորջրյա մշակութային ժառանգության հայտնաբերման մասին՝ սույն Կոնվենցիայի 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ հոդվածների համաձայն: Միեւնույն ժամանակ Կողմ պետություններն ապահովում են, որ ինքնիշխան անձեռնմխելիությամբ օժտված, ոչ առևտրային նպատակներով գործող իրենց ռազմանավերի եւ այլ պետական նավերի կամ ռազմական օդանավերի շահագործումը կամ շահագործման հնարավորությունները չխաթարող համապատասխան միջոցների ընդունմամբ դրանք, որքանով որ դա ողջամիտ եւ իրագործելի է, համապատասխանեն սույն Կոնվենցիայի 9-րդ, 10-րդ, 11-րդ եւ 12-րդ հոդվածների դրույթներին:

### **Հոդված 14. Տարածք մուտք գործելու, առուվաճառքի եւ տիրապետման նկատմամբ հսկողությունը**

Կողմ պետությունները ձեռնարկում են միջոցներ՝ կանխելու ապօրինի արտահանված եւ (կամ) դուրս բերված ստորջրյա մշակութային ժառանգության՝ իրենց տարածք մուտք գործելը, առուվաճառքը կամ տիրապետումն այն դեպքում, երբ դուրսբերումը հակասում է սույն Կոնվենցիային:

**Հոդված 15. Կողմ պետությունների իրավագործության ներքո գտնվող  
շրջանները չօգտագործելը**

Կողմ պետությունները ձեռնարկում են միջոցներ՝ արգելելու իրենց տարածքի, այդ թվում՝ իրենց ծովային նավահանգիստների, ինչպես նաև իրենց բացառիկ իրավագործության կամ հսկողության ներքո գտնվող արհեստական կղզիների, կայանքների եւ շինությունների օգտագործումը՝ ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված ցանկացած այնպիսի գործողության իրականացմանն աջակցելու համար, որը չի համապատասխանում սույն Կոնվենցիային:

**Հոդված 16. Քաղաքացիների եւ նավերի նկատմամբ ձեռնարկվող միջոցները**

Կողմ պետությունները ձեռնարկում են բոլոր իրագործելի միջոցները՝ ապահովելու համար, որ իրենց քաղաքացիները եւ իրենց դրոշը կրող նավերը սույն Կոնվենցիային չհամապատասխանող եղանակով չզբաղվեն ստորջրյա մշակութային ժառանգության դեմ ուղղված որեւէ գործողությամբ:

**Հոդված 17. Պատասխանատվության միջոցները**

1. Յուրաքանչյուր Կողմ պետություն կիրառում է պատասխանատվության միջոցներ՝ սույն Կոնվենցիան իրականացնելու համար ձեռնարկված միջոցները խախտելու համար:

2. Խախտումների համար կիրառվող պատասխանատվության միջոցները պետք է լինեն համարժեք խստության, որ արդյունավետորեն ապահովեն սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխանությունը եւ կանխեն խախտումները՝ անկախ դրանց կատարման վայրից, ինչպես նաև զրկեն խախտողներին իրենց ապօրինի գործողություններից բխող որեւէ օգուտից:

3. Կողմ պետությունները համագործակցում են՝ ապահովելու սույն հոդվածի համաձայն կիրառված պատասխանատվության միջոցների իրականացումը:

### **Հոդված 18. Ստորջրյա մշակութային ժառանգության բնագրավումը եւ տնօրինումը**

1 Յուրաքանչյուր Կողմ պետություն ձեռնարկում է միջոցներ՝ նախատեսված իր տարածքում այն ստորջրյա մշակութային ժառանգությունը բնագրավելու համար, որը դուրս է բերվել սույն Կոնվենցիային չհամապատասխանող ձեռով:

2 Յուրաքանչյուր Կողմ պետություն արձանագրում, պաշտպանում եւ ձեռնարկում է բոլոր ողջամիտ միջոցները՝ սույն Կոնվենցիայի համաձայն բնագրավված ստորջրյա մշակութային ժառանգությունը ամրակայելու համար:

3. Յուրաքանչյուր Կողմ պետություն ծանուցում է Գլխավոր տնօրենին եւ ցանկացած այլ պետության, որն ունի ստուգելի, հատկապես՝ մշակութային, պատմական կամ հնագիտական կապ տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության հետ, սույն Կոնվենցիայի համաձայն իր կողմից իրականացված՝ ստորջրյա մշակութային ժառանգության ցանկացած բնագրավման մասին:

4. Այն Կողմ պետությունը, որը բնագրավել է ստորջրյա մշակութային ժառանգությունը, ապահովում է, որ դրա տնօրինումը ծառայի հոգուտ հանրային շահի՝ հաշվի առնելով պահում եւ հետազոտություն իրականացնելու անհրաժեշտությունը, ցրված հավաքածուները կրկին որպես մեկ ամբողջություն հավաքելու անհրաժեշտությունը, հանրային մատչելիության, ցուցադրության եւ կրթության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ ցանկացած պետության շահերը, որը տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության նկատմամբ ունի ստուգելի, հատկապես՝ մշակութային, պատմական կամ հնագիտական կապ:

## **Հոդված 19. Համագործակցությունը եւ տեղեկությունների փոխանակումը**

1 Կողմ պետությունները համագործակցում եւ փոխադարձ օգնություն են ցույց տալիս միմյանց սույն Կոնվենցիայի շրջանակներում ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության եւ կառավարման ոլորտում, այդ թվում համագործակցում են, եթե դա իրագործելի է, տվյալ ժառանգության քննության, պեղումների, փաստաթղթավորման, պահման, ուսումնասիրության եւ հանրահռչակման ոլորտներում:

2 Այնքանով, որքանով դա համապատասխանում է սույն Կոնվենցիայի նպատակներին, յուրաքանչյուր Կողմ պետություն պարտավորվում է փոխանակել տեղեկություններ մյուս Կողմ պետությունների հետ ստորջրյա մշակութային ժառանգության վերաբերյալ, այդ թվում՝ ժառանգության հայտնաբերման, ժառանգության գտնվելու վայրի, սույն Կոնվենցիային հակասող եղանակով կամ այլ կերպ միջազգային իրավունքի խախտմամբ պեղված կամ դուրս բերված ժառանգության, վերաբերելի գիտական մեթոդաբանության ու տեխնոլոգիաների, ինչպես նաեւ տվյալ ժառանգությանն առնչվող իրավական զարգացումների վերաբերյալ:

3 Կողմ պետությունների միջեւ կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Կողմ պետությունների միջեւ փոխանակվող այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ստորջրյա մշակութային ժառանգության հայտնաբերմանը կամ գտնվելու վայրին, այնքանով, որքանով դա համապատասխանում է դրանց ազգային օրենսդրությանը, պահվում են գաղտնի եւ վերապահվում են Կողմ պետությունների իրավասու մարմիններին այնքան ժամանակ, քանի դեռ այդ տեղեկությունների բացահայտումը կարող է վտանգել կամ այլ կերպ սպառնալ տվյալ ստորջրյա մշակութային ժառանգության պահպանությանը:

4. Յուրաքանչյուր Կողմ պետություն ձեռնարկում է բոլոր իրագործելի միջոցները՝ տարածելու տեղեկություններ, այդ թվում՝ համապատասխան միջազգային տվյալների բազաների միջոցով, եթե հնարավոր է, այն ստորջրյա

մշակութային ժառանգության մասին, որը պեղվել կամ դուրս է բերվել սույն Կոնվենցիային հակասող եղանակով կամ այլ կերպ միջազգային իրավունքի խախտմամբ:

## **Հոդված 20. Հանրային իրազեկվածությունը**

Յուրաքանչյուր Կողմ պետություն ձեռնարկում է բոլոր իրագործելի միջոցները՝ բարձրացնելու հանրային իրազեկության աստիճանը ստորջրյա մշակութային ժառանգության արժեքի եւ նշանակության, ինչպես նաեւ սույն Կոնվենցիայի շրջանակներում դրա պահպանության կարեւորության վերաբերյալ:

## **Հոդված 21. Ստորջրյա հնագիտության ոլորտում վերապատրաստման անցկացումը**

Կողմ պետությունները համագործակցում են ստորջրյա հնագիտության, ստորջրյա մշակութային ժառանգության պահպանության համար տեխնիկական միջոցների կիրառման ոլորտում վերապատրաստման, ինչպես նաեւ համաձայնեցված պայմաններով ստորջրյա մշակութային ժառանգությանը վերաբերող տեխնոլոգիաների փոխանցման ապահովման հարցում:

## **Հոդված 22. Իրավասու մարմինները**

1. Սույն Կոնվենցիայի պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով Կողմ պետությունները ստեղծում են իրավասու մարմիններ կամ անհրաժեշտության դեպքում ուժեղացնում են արդեն գոյություն ունեցողները՝ նպատակ ունենալով նախատեսել ստորջրյա մշակութային ժառանգության գույքացուցակի ստեղծումը, պահպանումն ու թարմացումը, ստորջրյա մշակութային ժառանգության արդյունավետ պաշտպանությունը, պահումը, հանրահռչակումը եւ կառավարումը, ինչպես նաեւ հետազոտությունն եւ կրթումը:

2. Կողմ պետությունները Գլխավոր տնօրենին հաղորդում են ստորջրյա մշակութային ժառանգության հետ կապված իրենց իրավասու մարմինների անուններն ու հասցեները:

### **Հոդված 23. Կողմ պետությունների նիստերը**

1. Գլխավոր տնօրենը հրավիրում է Կողմ պետությունների նիստ սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, իսկ դրանից հետո՝ առնվազն յուրաքանչյուր երկու տարին մեկ: Կողմ պետությունների մեծամասնության դիմումի հիման վրա Գլխավոր տնօրենը հրավիրում է Կողմ պետությունների արտահերթ նիստ:

2. Նիստի ժամանակ Կողմ պետությունները որոշում են իրենց գործառույթներն ու պարտականությունները:

3. Նիստի ժամանակ Կողմ պետություններն ընդունում են իրենց Աշխատակարգը:

4. Նիստի ժամանակ Կողմ պետությունները կարող են ստեղծել Գիտական եւ տեխնիկական հարցերով խորհրդատվական մարմին, որը կազմված է Կողմ պետությունների կողմից առաջադրված փորձագետներից՝ պատշաճ կերպով հաշվի առնելով հավասարաչափ աշխարհագրական բաշխման սկզբունքը եւ սեռերի հավասարակշռության ցանկալիությունը:

5. Կողմ պետությունների նիստերի ժամանակ Գիտական եւ տեխնիկական հարցերով խորհրդատվական մարմինը պատշաճ կերպով աջակցություն է տրամադրում Աշխատակարգի իրականացմանն առնչվող գիտական կամ տեխնիկական բնույթի հարցերի վերաբերյալ:

#### **Հոդված 24. Սույն Կոնվենցիայի քարտուղարությունը**

1. Գլխավոր տնօրենը պատասխանատու է սույն Կոնվենցիայի քարտուղարության գործառույթների իրականացման համար:

2. Քարտուղարության պարտավորությունները ներառում են հետևյալը.

ա) Կողմ պետությունների նիստերի կազմակերպում, ինչպես նախատեսված է սույն Կոնվենցիայի 23-րդ հոդվածի 1-ին կետով եւ

բ) աջակցության տրամադրում Կողմ պետություններին Կողմ պետությունների նիստերի որոշումներն իրականացնելու հարցում:

#### **Հոդված 25. Վեճերի խաղաղ կարգավորումը**

1. Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ ավելի Կողմ պետությունների միջեւ առաջացած ցանկացած վեճ ենթակա է կարգավորման բարեխղճորեն անցկացվող բանակցությունների կամ այլ խաղաղ կարգավորման միջոցով՝ նրանց սեփական ընտրությամբ:

2. Եթե այդ բանակցությունները չեն կարգավորում վեճը ողջամիտ ժամկետում, ապա այն կարող է ներկայացվել ՅՈՒՆԵՍԿՕ՝ միջնորդության նպատակով՝ տվյալ Կողմ պետությունների համաձայնությամբ:

3. Եթե միջնորդություն չի իրականացվում, կամ միջնորդության միջոցով վեճը չի կարգավորվում, ապա սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված՝ Կողմ պետությունների ցանկացած վեճի դեպքում, անկախ այն հանգամանքից՝ նրանք «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի Կողմ են, թե՛ ոչ, համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis) կիրառվում են «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի XV մասով սահմանված վեճերի կարգավորման դրույթները:

4. Համաձայն «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 287-րդ հոդվածի՝ սույն Կոնվենցիայի եւ այդ կոնվենցիայի Կողմ պետության կողմից ընտրված ցանկացած ընթացակարգ կիրառվում է սույն հոդվածով նախատեսված վեճերի կարգավորման համար, եթե այդ Կողմ պետությունը սույն Կոնվենցիան վավերացնելիս, ընդունելիս, հաստատելիս կամ դրան միանալիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ 287-րդ հոդվածի համաձայն չի ընտրում այլ ընթացակարգ՝ սույն Կոնվենցիայից բխող վեճերը կարգավորելու համար:

5. Սույն Կոնվենցիայի Կողմ պետությունը, որը «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի Կողմ չէ, սույն Կոնվենցիան վավերացնելիս, ընդունելիս, հաստատելիս կամ դրան միանալիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ ազատ է գրավոր հայտարարության միջոցով ընտրելու «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 287-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված մեկ կամ մի քանի միջոց՝ սույն հոդվածով նախատեսված վեճերը կարգավորելու համար: 287-րդ հոդվածը կիրառվում է այս հայտարարության, ինչպես նաեւ ցանկացած վեճի նկատմամբ, որի Կողմ է այդ պետությունը, սակայն որը չի կարգավորվում գործող հայտարարությամբ: Համաձայն «Ծովային իրավունքի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի V եւ VII հավելվածների՝ հաշտարարության եւ արբիտրաժի նպատակով այդ պետությունն իրավունք ունի նշանակելու հաշտարարներ եւ արբիտրներ, որոնք ընդգրկված են համապատասխանաբար V հավելվածի 2-րդ հոդվածում եւ VII հավելվածի 2-րդ հոդվածում նշված ցուցակներում՝ սույն Կոնվենցիայից բխող վեճերը կարգավորելու համար:

## **Հոդված 26. Վավերացնելը, ընդունելը, հաստատելը կամ միանալը**

1 Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ պետությունների կողմից:

## 2 Սույն Կոնվենցիային ենթակա են միանալու՝

ա) այն պետությունները, որոնք ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ չեն, սակայն Միավորված ազգերի կազմակերպության կամ ՄԱԿ-ի համակարգում գործող մասնագիտացված գործակալության կամ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամ են, ինչպես նաև Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրության Կողմ հանդիսացող պետությունները եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր կոնֆերանսի կողմից սույն Կոնվենցիային միանալու առաջարկություն ստացած ցանկացած այլ պետություն.

բ) այն տարածքները, որոնք ունեն լիարժեք ներքին ինքնավարություն եւ ճանաչված են որպես այդպիսին Միավորված ազգերի կազմակերպության կողմից, սակայն ձեռք չեն բերել լիարժեք անկախություն Գլխավոր ասամբլեայի 1514 (XV) բանաձեւի համաձայն, եւ որոնք ունեն սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի մասով, այդ թվում՝ այդ հարցերի վերաբերյալ համաձայնագրեր կնքելու իրավասություն:

3. Վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ է հանձնվում Գլխավոր տնօրենին:

## **Հոդված 27. Ուժի մեջ մտնելը**

Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնում է 26-րդ հոդվածում նշված քսաներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու ամսաթվից երեք ամիս հետո, սակայն միայն այն քսան պետությունների կամ տարածքների համար, որոնք համապատասխան կարգով ի պահ են հանձնել իրենց փաստաթղթերը: Այն ուժի մեջ է մտնում յուրաքանչյուր այլ պետության կամ տարածքի համար երեք ամիս անց այն ամսաթվից, երբ այդ պետությունը կամ տարածքն ի պահ է հանձնել իր փաստաթուղթը:

## **Հոդված 28. Հայտարարություն ցամաքային ջրերի վերաբերյալ**

Սույն Կոնվենցիան վավերացնելիս, ընդունելիս, հաստատելիս կամ դրան միանալիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ ցանկացած պետություն կամ տարածք կարող է հայտարարել, որ Կանոնները կիրառվում են ոչ ծովային բնույթի ցամաքային ջրերի նկատմամբ:

## **Հոդված 29. Կիրառման աշխարհագրական սահմանափակումը**

Սույն Կոնվենցիան վավերացնելիս, ընդունելիս, հաստատելիս կամ դրան միանալիս ցանկացած պետություն կամ տարածք կարող է ավանդապահին ներկայացնել հայտարարություն այն մասին, որ սույն Կոնվենցիան չի կիրառվում իր տարածքի, ներքին ջրերի, արշիպելագային ջրերի կամ տարածքային ծովի որոշակի մասերի նկատմամբ՝ նշելով այդ հայտարարության պատճառները: Այդ պետությունը, որքանով դա իրագործելի է, եւ հնարավորինս շուտ նպաստում է այնպիսի պայմանների ստեղծմանը, համաձայն որոնց սույն Կոնվենցիան կիրառվում է իր հայտարարության մեջ նշված շրջանների նկատմամբ, եւ այդ նպատակով դա իրագործելուց հետո նաեւ ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվում է իր հայտարարությունից:

## **Հոդված 30. Վերապահումները**

Բացառությամբ 29-րդ հոդվածի՝ սույն Կոնվենցիայի նկատմամբ որեւէ վերապահում չի կարող կիրառվել:

## **Հոդված 31. Փոփոխությունները**

1. Կողմ պետությունը կարող է առաջարկել սույն Կոնվենցիայի մեջ կատարել փոփոխություններ՝ Գլխավոր տնօրենին գրավոր հաղորդելով այդ մասին: Գլխավոր տնօրենն այդ հաղորդակցությունն ուղարկում է բոլոր Կողմ

պետություններին: Եթե հաղորդակցությունն ուղարկելու օրվանից վեց ամսվա ընթացքում Կողմ պետությունների առնվազն կեսը դրական է արձագանքում հարցմանը, ապա Գլխավոր տնօրենն այդ առաջարկությունը ներկայացնում է Կողմ պետությունների հաջորդ նիստին՝ քննարկման եւ հնարավոր ընդունման համար:

2. Փոփոխություններն ընդունվում են ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցող Կողմ պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ:

3. Սույն Կոնվենցիայի ընդունումից հետո դրանում կատարվող փոփոխությունները ենթակա են վավերացման, ընդունման, հաստատման կամ Կողմ պետությունների կողմից միացման:

4. Սակայն փոփոխություններն ուժի մեջ են մտնում միայն այն Կողմ պետությունների համար, որոնք վավերացրել, ընդունել, հաստատել կամ միացել են դրանց սույն հոդվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերը Կողմ պետությունների երկու երրորդի կողմից ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո: Այնուհետեւ յուրաքանչյուր պետության կամ տարածքի դեպքում, որը վավերացնում, ընդունում, հաստատում կամ միանում է այդ փոփոխությանը, փոփոխությունն ուժի մեջ է մտնում այդ Կողմ պետության կողմից վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

5. Պետությունը կամ տարածքը, որը դառնում է սույն Կոնվենցիայի Կողմ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո, եթե այդ պետությունը կամ տարածքը այլ մտադրություն չի հայտնում, համարվում է՝

ա) սույն Կոնվենցիայի կողմ՝ դրանում կատարված փոփոխություններով. եւ

բ) փոփոխությունների չենթարկված Կոնվենցիայի կողմ՝ ցանկացած Կողմ պետության դեպքում, որի համար փոփոխությունները պարտադիր իրավական ուժ չունեն:

### **Հոդված 32. Չեղյալ հայտարարելը**

1. Կողմ պետությունը Գլխավոր տնօրենին հասցեագրված գրավոր ծանուցմամբ կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:

2. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում ծանուցումն ստանալու ամսաթվից սկսած տասներկու ամիս հետո, եթե ծանուցման մեջ ավելի ուշ ժամկետ նշված չէ:

3. Չեղյալ հայտարարելը ոչ մի դեպքում չի ազդում որեւէ Կողմ պետության՝ սույն Կոնվենցիայով նախատեսված որեւէ պարտավորության կատարման վրա, որը, անկախ սույն Կոնվենցիայից, միջազգային իրավունքի համաձայն պարտադիր է դրա համար:

### **Հոդված 33. Կանոնները**

Սույն Կոնվենցիային կցված Կանոնները դրա անբաժան մասն են կազմում, եւ եթե այլ բան հստակ նախատեսված չէ, ապա սույն Կոնվենցիային ցանկացած հղում համարվում է Կանոններին կատարված հղում:

### **Հոդված 34. Միավորված ազգերի կազմակերպությունում գրանցվելը**

Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածի՝ սույն Կոնվենցիան Գլխավոր տնօրենի դիմումի հիման վրա գրանցվում է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում:

### **Հոդված 35. Իրավական ուժ ունեցող տեքստերը**

Սույն Կոնվենցիան կազմված է արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն, ընդ որում, վեց տեքստերը հավասարազոր են:

## **Հավելված**

### **Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողության վերաբերյալ կանոնները**

#### **I. Ընդհանուր սկզբունքները**

**Կանոն 1** Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանությունը տեղում պահպանության միջոցով դիտարկվում է որպես առաջնային տարբերակ: Համապատասխանաբար, ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունները թույլատրվում են այդ ժառանգության պաշտպանությանը համապատասխանող եղանակով եւ ելնելով այն հանգամանքից, որ այդ պահանջը կարող է թույլատրվել ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մեջ էական ներդրում կատարելու կամ դրա ուսումնասիրության կամ հանրահռչակման նպատակով:

**Կանոն 2** Ստորջրյա մշակութային ժառանգության առեւտրային շահագործումն առուվաճառքի կամ սպեկուլյացիայի նպատակներով կամ դրա անդարձելի տարածումը հիմնովին անհամատեղելի է ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության եւ պատշաճ կառավարման հետ: Ստորջրյա մշակութային ժառանգությունը՝ որպես առեւտրային նշանակության ապրանք, առեւտրի առարկա չի համարվում, ենթակա չէ վաճառքի, գնման կամ փոխանակման: Սույն կանոնը չի կարող մեկնաբանվել որպես հետեւյալը կանխող.

ա) մասնագիտական հնագիտական ծառայությունների կամ դրանցից բխող անհրաժեշտ ծառայությունների մատուցում, որոնց բնույթն ու նպատակն ամբողջությամբ համապատասխան են սույն Կոնվենցիային եւ ենթակա են իրավասու մարմինների թույլտվությանը

բ) հետազոտական նախագծի ընթացքում դուրս բերված ստորջրյա մշակութային ժառանգության՝ սույն Կոնվենցիային համապատասխան ի պահ հանձնում՝ պայմանով, որ այն չի վտանգի դուրս բերված նյութերի գիտական կամ մշակութային նշանակությունը կամ չի խախտի ամբողջականությունը կամ չի հանգեցնի դրանց անդարձելի տարածմանը, կհամապատասխանի 33-րդ եւ 34-րդ կանոնների դրույթներին եւ ենթակա կլինի իրավասու մարմինների թույլտվությանը:

**Կանոն 3** Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունները չունեն ավելի մեծ բացասական ազդեցություն ստորջրյա մշակութային ժառանգության վրա, քան անհրաժեշտ է նախագծի նպատակներն իրականացնելու համար:

**Կանոն 4** Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունների իրականացման ընթացքում պետք է օգտագործվեն անվնաս տեխնիկական միջոցներ եւ հետազոտական մեթոդներ, որոնք նախընտրելի են առարկաները դուրս բերելու համար: Եթե պեղումները կամ դուրսբերումն անհրաժեշտ են գիտական ուսումնասիրության կամ ստորջրյա մշակութային ժառանգության վերջնական պաշտպանության համար, օգտագործվող մեթոդներն ու տեխնիկական միջոցները պետք է լինեն հնարավորինս անվնաս եւ նպաստեն մասունքների պահպանությանը:

**Կանոն 5** Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողություններ իրականացնելիս պետք է խուսափել մարդկային մասունքների եւ պաշտամունքի վայրերի անդորրն անհարկի խախտելուց:

**Կանոն 6** Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունները խստորեն կարգավորվում են մշակութային, պատմական եւ հնագիտական տեղեկությունների պատշաճ գրանցումն ապահովելու համար:

**Կանոն 7** Պետք է նպաստել ստորջրյա մշակութային ժառանգության՝ տեղում հանրային մատչելիության ապահովմանը՝ բացառությամբ այն դեպքերի,

երբ այդ մատչելիությունն անհամատեղելի է ժառանգության պաշտպանության եւ կառավարման հետ:

**Կանոն 8** Խրախուսվում է ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունների իրականացման բնագավառում միջազգային համագործակցությունը՝ հնագետների եւ այլ համապատասխան մասնագետների արդյունավետ փոխանակումը կամ մասնագիտական փորձի կիրառումը խթանելու համար:

## **II. Նախագծի պլանը**

**Կանոն 9** Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված որեւէ գործողություն իրականացնելուց առաջ մշակվում է տվյալ գործողության նախագծի պլանը, եւ այն ներկայացվում է իրավասու մարմիններին՝ թույլտվություն եւ համապատասխան փորձագիտական գնահատական ստանալու համար:

**Կանոն 10** Նախագծի պլանը ներառում է հետեւյալի վերաբերյալ տեղեկություններ.

- ա) նախորդ կամ նախնական ուսումնասիրությունների գնահատում.
- բ) նախագծի խնդիրներ եւ նպատակներ.
- գ) օգտագործվելիք մեթոդաբանություն եւ կիրառվելիք տեխնիկական միջոցներ
- դ) ակնկալվող ֆինանսավորում.
- ե) նախագծի ավարտի ակնկալվող ժամանակացույց.
- զ) խմբի կազմ եւ խմբի յուրաքանչյուր անդամի որակավորումներ, պարտականություններ եւ փորձ

է) դաշտային աշխատանքներից հետո վերլուծության եւ այլ գործողությունների պլաններ.

ը) գտածո առարկաների եւ տեղանքի պահպանության ծրագիր՝ իրավասու մարմինների հետ սերտ համագործակցությամբ.

թ) նախագծի տեւողության ամբողջ ընթացքում տեղանքի կառավարման եւ սպասարկման քաղաքականություն.

ժ) փաստաթղթավորման ծրագիր.

ժա) անվտանգության քաղաքականություն.

ժբ) բնապահպանական քաղաքականություն.

ժգ) թանգարանների եւ այլ հաստատությունների, մասնավորապես՝ գիտական հաստատությունների հետ համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություններ.

ժդ) զեկույցի պատրաստում.

ժե) արխիվների, այդ թվում՝ դուրս բերված ստորջրյա մշակութային ժառանգության ի պահ հանձնում. եւ

ժե) հրապարակման ծրագիր:

**Կանոն 11** Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողություններն իրականացվում են իրավասու մարմինների կողմից հաստատված նախագծի պլանին համապատասխան:

**Կանոն 12** Այն դեպքում, երբ կատարվում են անսպասելի հայտնաբերումներ, կամ հանգամանքները փոխվում են, նախագծի պլանը վերանայվում եւ փոփոխվում է իրավասու մարմինների հաստատմամբ:

**Կանոն 13** Ծայրահեղ անհրաժեշտության կամ պատահական հայտնաբերումների դեպքում ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունները, այդ թվում՝ պահպանության միջոցառումները կամ

կարճաժամկետ գործողությունները, մասնավորապես՝ տեղանքի ամրակայմանն ուղղված միջոցառումները կարող են թույլատրվել նախագծի պլանի բացակայության պայմաններում՝ նպատակ ունենալով ապահովել ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանությունը:

### **III. Նախնական աշխատանքները**

**Կանոն 14** 10-րդ կանոնի «ա» կետում նշված նախնական աշխատանքները ներառում են գնահատումը, որի միջոցով որոշվում է ստորջրյա մշակութային ժառանգության եւ շրջակա բնական միջավայրի նշանակությունը եւ առաջարկվող նախագծից առաջացող հնարավոր վնասների նկատմամբ խոցելիությունը, ինչպես նաեւ տվյալներ ստանալու հնարավորությունը, որը կհամապատասխաներ նախագծի նպատակներին:

**Կանոն 15** Գնահատումը ներառում է նաեւ առկա պատմական եւ հնագիտական վկայությունների, տեղանքի հնագիտական եւ բնապահպանական բնութագրերի լրացուցիչ ուսումնասիրություն, ինչպես նաեւ գործողությունների հետեւանքով վտանգված ստորջրյա մշակութային ժառանգության երկարաժամկետ ամրակայման համար ցանկացած հնարավոր միջամտության հետեւանք:

### **IV. Նախագծի նպատակը, մեթոդաբանությունը եւ տեխնիկական միջոցները**

**Կանոն 16** Մեթոդաբանությունը համապատասխանում է նախագծի նպատակներին, իսկ կիրառվող տեխնիկական միջոցները հնարավորինս չվնասող են:

## **V. Ֆինանսավորումը**

**Կանոն 17** Բացառությամբ այն արտակարգ իրավիճակների, երբ անհրաժեշտ է ապահովել ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանություն, ցանկացած գործողություն իրականացնելուց առաջ ապահովվում է համարժեք ֆինանսական հիմք, որը բավարար է նախագծի պլանի բոլոր փուլերն ավարտին հասցնելու համար, այդ թվում՝ դուրս բերված գտածո առարկաների պահպանումը, փաստաթղթավորումը եւ վերահսկումը, ինչպես նաեւ զեկույցների պատրաստումն ու տարածումը:

**Կանոն 18** Նախագծի պլանը ցույց է տալիս նախագիծն ավարտին հասցնելու համար ֆինանսավորման կարողությունները, օրինակ՝ ապահովագրական պարտավորություն ձեռք բերելու միջոցով:

**Կանոն 19** Նախագծի պլանը ներառում է անկանխատեսելի իրավիճակների համար նախատեսված պլան, որը կապահովի ստորջրյա մշակութային ժառանգության եւ դա հիմնավորող փաստաթղթերի պահպանությունն ակնկալվող ֆինանսավորման ցանկացած ընդհատման դեպքում:

## **VI. Նախագծի տեղողությունը՝ ժամանակացույցը**

**Կանոն 20** Մշակվում է պատշաճ ժամանակացույց՝ նախապես ապահովելու համար ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված ցանկացած գործողության իրականացումը, նախագծի պլանի բոլոր փուլերն ավարտին հասցնելը, այդ թվում՝ դուրս բերված ստորջրյա մշակութային ժառանգության պահպանումը, փաստաթղթավորումը եւ վերահսկումը, ինչպես նաեւ հաշվետվությունների պատրաստումն ու տարածումը:

**Կանոն 21** Նախագծի պլանը ներառում է անկանխատեսելի իրավիճակների համար նախատեսված պլան, որը կապահովի ստորջրյա մշակութային ժառանգության եւ դա հիմնավորող փաստաթղթերի

պահպանությունը նախագծի ցանկացած ընդհատման կամ դադարեցման դեպքում:

## **VII. Իրավասությունը եւ որակավորումները**

**Կանոն 22** Ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունները ձեռնարկվում են միայն նախագծին համապատասխան գիտական գործունեությամբ զբաղվելու իրավասություն ունեցող որակավորված հնագետի ուղղորդմամբ ու հսկողության ներքո, ինչպես նաեւ նրա կանոնավոր ներկայությամբ:

**Կանոն 23** Նախագծի թիմի բոլոր անդամներն ունեն որակավորում եւ նախագծի շրջանակներում ցուցաբերում են իրենց գործառույթներն իրականացնելու համար համապատասխան կոմպետենտություն:

## **VIII. Տեղանքի պահպանությունը եւ կառավարումը**

**Կանոն 24** Պահպանության ծրագիրը նախատեսում է հնագիտական մասունքների հետ գործ ունենալն ինչպես ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունների ընթացքում, այնպես էլ դրանց տարանցման ժամանակ եւ երկարաժամկետ հեռանկարում: Պահպանությունն իրականացվում է գործող մասնագիտական չափորոշիչներին համապատասխան:

**Կանոն 25** Տեղանքի կառավարման ծրագիրը նախատեսում է ստորջրյա մշակութային ժառանգության՝ տեղում պաշտպանություն եւ կառավարում դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում եւ դրանց դադարեցումից հետո: Ծրագիրը ներառում է հանրային իրազեկում, տեղանքի ամրակայման համար ողջամիտ միջոցառումների իրականացում, մշտադիտարկում եւ միջամտությունից պաշտպանության ապահովում:

## **IX. Փաստաթղթավորումը**

**Կանոն 26** Փաստաթղթավորման ծրագիրը, հնագիտական փաստաթղթավորման գործող մասնագիտական չափորոշիչներին համապատասխան, նախատեսում է մանրամասն փաստաթղթավորում, այդ թվում՝ ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունների վերաբերյալ առաջընթացի մասին զեկույց:

**Կանոն 27** Փաստաթղթավորումն առնվազն ներառում է տեղանքի վերաբերյալ համապարփակ զեկույց, այդ թվում՝ այն ստորջրյա մշակութային ժառանգության ծագումնաբանությունը, որոնք ստորջրյա մշակութային ժառանգությանն ուղղված գործողությունների իրականացման ընթացքում տեղափոխվել կամ հանվել են, դաշտային գրառումներ, պլաններ, գծագրեր, հատույթներ, ինչպես նաեւ լուսանկարներ կամ այլ միջոցներով կատարված արձանագրություններ:

## **X. Անվտանգությունը**

**Կանոն 28** Մշակվում է պատշաճ անվտանգության քաղաքականություն՝ նախագծի թիմի եւ երրորդ կողմերի անվտանգությունն ու առողջությունն ապահովելու համար, եւ որը համապատասխանում է բոլոր կիրառելի կանոնակարգային եւ մասնագիտական պահանջներին:

## **XI. Շրջակա միջավայրը**

**Կանոն 29** Մշակվում է պատշաճ բնապահպանական քաղաքականություն՝ ծովի հատակի եւ ծովային կենսաշխարհի հանգստությունն անհարկի չխախտելու համար:

## **XII. Զեկույցների կազմումը**

**Կանոն 30** Միջանկյալ եւ վերջնական զեկույցները հասանելի են դառնում նախագծի պլանով սահմանված ժամանակացույցի համաձայն եւ ի պահ են հանձնվում համապատասխան պետական արխիվներ:

**Կանոն 31.** Զեկույցները ներառում են՝

- ա) նպատակների վերաբերյալ գնահատականը
- բ) կիրառվող մեթոդների եւ տեխնիկական միջոցների վերաբերյալ գնահատականը
- գ) ձեռք բերված արդյունքների վերաբերյալ գնահատականը
- դ) գործունեության բոլոր փուլերի վերաբերյալ հիմնական գրաֆիկական եւ լուսանկարչական փաստաթղթերը
- ե) տեղանքի եւ հանված ցանկացած ստորջրյա մշակութային ժառանգության պահպանության եւ վերահսկման վերաբերյալ առաջարկությունները
- զ) հետագա գործողությունների վերաբերյալ առաջարկությունները:

## **XIII. Նախագծի արխիվների վերահսկումը**

**Կանոն 32** Նախագծի արխիվների վերահսկում համաձայնեցվում է ցանկացած գործողություն իրականացնելուց առաջ եւ սահմանվում է նախագծի պլանով:

**Կանոն 33** Նախագծի արխիվները, այդ թվում՝ հանված ցանկացած ստորջրյա մշակութային ժառանգություն եւ բոլոր հիմնավորող փաստաթղթերի պատճենները հնարավորության սահմաններում պահվում են միասին եւ անվնաս որպես հավաքածու այնպես, որ դրանք հասանելի լինեն մասնագիտական օգտագործման եւ հանրության համար, ինչպես նաեւ արխիվների վերահսկման

համար: Դա արվում է հնարավորինս արագ եւ բոլոր դեպքում ոչ ուշ, քան նախագծի ավարտից տասը տարի հետո, եւ այնքանով, որքանով դա համատեղելի է ստորջրյա մշակութային ժառանգության պահպանության հետ:

**Կանոն 34** Նախագծի արխիվները կառավարվում են միջազգային մասնագիտական չափորոշիչներին համապատասխան եւ ենթակա են իրավասու մարմինների թույլտվությանը:

#### **XIV. Տարածումը**

**Կանոն 35** Նախագիծը, ըստ անհրաժեշտության, նախատեսում է հանրային կրթության ապահովում եւ ծրագրի արդյունքների ներկայացում հասարակայնության լայն շրջանակներին:

**Կանոն 36** Նախագծի վերջնական եզրակացությունը՝

ա) հնարավորինս շուտ հրապարակվում է՝ հաշվի առնելով նախագծի բարդությունը եւ տեղեկությունների գաղտնի կամ զգայուն բնույթը, եւ

բ) ի պահ է հանձնվում համապատասխան պետական արխիվ: